

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿՋԵՆԱԳՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ
«ՄԱՏԵԱՆ ԳՈՒՆԻ» ԶՈՐԱՄԱՍԸ

Ն. Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Հայ աղբյուրները հարևան ժողովուրդների պատմական անցյալին վերաբերող հաճախ այնպիսի տեղեկություններ են հաղորդում, որոնք չեն պահպանվել տվյալ երկրի պատմիչների երկերում: Սասանյան Պարսկաստանի բանակի զորամասերից մեկի՝ «Մատեան զնդի» մասին մեր ունեցած պատկերացումն էլ հիմնված է հայ պատմական աղբյուրներում հիշատակված տեղեկությունների վրա: Բնական է, որ նմանօրինակ, թեկուզ թուուցիկ տվյալները կարևոր նշանակություն ունեն Մերձավոր Արևելքի երկրների ռազմական գործի պատմության ուսումնասիրության համար:

Աղբյուրներից առաջինը, որտեղ «Մատեան զնդի» մասին հիշատակություններ են պահպանվել, Նդիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկն է: Այդ տվյալները առկա են Ավարայրի ձախտամարտի հատվածում: Դրանցից առաջինը հիշվում է պարսկական զորահրամանատարի հատուկ ուշադրության առարկա հանդիսացած գունդը մարտական վիճակի բերելու կապակցությամբ. «...և այսպէս ամրացուցանէր զգունդն Մատեան իբրև զաշտարակ մի հզօր և կամ իբրև զբերդ մի անմատոյց»¹:

Երկրորդ վկայությունը վերաբերում է մարտի ընթացքում հայկական զորամասերի հարձակման հետևանքով պարսիկների ռազմական կազմում առաջացած ձեղքվածքին, երբ «Մատեան զունդը», առանց մարտին մասնակցելու, դիմում է փախուստի. «...և այնպէս շտապ տազնապի ի վերայ հասուցանէր, մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային»²:

«Մատեան զնդի» մասին տեղեկություններ են պահպանվել նաև Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ: Դեպքը վերաբերում է Արշակունի խոսրով Բ արքայի ժամանակին: Երբ վերջինս զրադված էր անտառատնկման աշխատանքներով, լուր է ստանում պարսից զորքի հարձակման մասին և հրամայում է Բզնունյաց նահապետ Դատաբեին զորք հավաքել և կասեցնել թշնամու առաջխաղացումը. «Ապա հրաման ետ արքայ խոսրով Դատաբայ նահապետի Բզնունեաց, զուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրսն մատենիկ զնդան ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել արգելուլ զթշնամիսն»³:

«Մատեան զնդի» մասին մեկ ծանոթ տեղեկությունները պահպանված են միայն վերը նշված երկու աղբյուրներում, որոնք, սակայն, խիստ սուղ են:

¹ «Նդիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխատութեամբ Ն. Տէր-Միսասեան, Երևան, 1957:

² Նդիշեի, V:

³ «Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, 111, 8:

Ուստի, հենվելով սոսկ դրանց վրա, հնարավոր չէ պատասխանել զորամասի կազմին, կառուցվածքին և մարտական առանձնահատկություններին վերաբերող կարևոր հարցերի:

Այնուամենայնիվ, Եղիշեի և Փավստոսի երկերի հրատարակողներն ու թարգմանիչները, ինչպես նաև այլ հետազոտողներ փորձել են բացատրել «Մատեան գունդ» տերմինի իմաստը:

Նրանք «Մատեան գունդը» համեմատել են Աբեմենյան Պարսկաստանի բանակում եղած և Հերոդոտի կողմից նկարագրված «Անմահների գնդի» հետ և գտել, որ Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանում պարսկական բանակում «Մատեան գնդի» գոյությունը պայմանավորված է աբեմենյան շրջանի ռազմական ավանդույթի պահպանմամբ, և եզրակացրել, որ երկու գնդերը կազմավորման նույնանման սկզբունք են ունեցել⁴:

Եղիշեի երկի թարգմանիչներն էլ, չկռահելով բառի բուն իմաստը, այն թարգմանել են որպես «Անմահների գունդ», փակագծերում պահպանելով «Մատեան գունդ» արտահայտությունը⁵:

«Մատեան գունդ» արտահայտության մեջ «մատեան» բառը բացատրվել է հայերեն մատեան (գիրք, ցուցակ) նշանակությամբ: Նման բացատրությունը տեղ է գտել ոչ միայն Եղիշեի երկի հրատարակությունների մեջ եղած ծանոթագրություններում, այլև Հայկազյան, Հր. Աճառյանի Արմատական և Ստ. Մալխասյանի Բացատրական բառարաններում:

Դեռ ավելին, «Մատեան գնդի» նույնացումը Աբեմենյան Պարսկաստանի բանակի «Անմահների գնդի» հետ մի կողմից, և մյուս կողմից՝ բառի ստուգաբանումը որպես ցուցակի, հետազոտողներին բերել է այն հետևություն, թե «Անմահների գունդը» հաշվառման էր ենթարկվում հատուկ ցուցակների միջոցով:

Այդպիսի բացատրության համար հիմք է ծառայել Հերոդոտի «Պատմության» հայտնի հատվածը, ուր հիշատակված է «Անմահների գնդի» կազմավորման եղանակը. «Տասը հազար ընտիր պարսիկների ղեկավարն էր Հիդառնեսի որդի Հիդառնեսը: Այդ մարտիկները պարսիկների մոտ կոչվում էին «Անմահներ» հետևյալ պատճառով. երբ նրանցից որևէ մեկը հիվանդության կամ մահվան պատճառով հեռանում էր շարքերից, նրան փոխարինողը արդեն ընտրված էր: Այսպիսով, «Անմահների» թիվը ոչ ավելանում էր և ոչ էլ պակասում»⁶:

Ինչպես տեսնում ենք, Հերոդոտի հաղորդումը վերաբերում է «Անմահների գնդի» կազմավորման սկզբունքին, այլ ոչ հաշվառմանը⁷, հետևաբար, նշված հատվածը ցուցակի գոյությունը հաստատող կամ անգամ ենթադրող ոչ

⁴ Նշենք Եղիշեի երկի միայն մի բանի հրատարակությունների ծանոթագրությունները. «Եղիշեի Վարդապետի Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին», Միքայել Փաշայի Փորտուգալ, Վենետիկ, 1902, էջ 346: Նույն բացատրությունը տրված է՝ Թիֆլիս, 1891, ծան. 22, Մոսկվա, 1892, ծան. 144 և հավելված բառարանում էջ 388: Տե՛ս նաև Եր. Տեր-Մինասյանի հրատ., Երևան, 1946, ծան. 145 և Երևան, 1958, ծան. 123 և այլն:

⁵ Victor Langlois, Collection des historiens anciens et modern de l'Arménie, Paris, 1869, I, էջ 231:

⁶ Геродот. История в девяти книгах. М., 1888, VIII, 83.

⁷ Աբեմենյան Պարսկաստանի բանակի հաշվառման եղանակի մասին տե՛ս Геродот, VIII, 60.

մի ակնարկ չի պարունակում: Եթե մի պահ ընդունենք Հերոդոտի վկայությունը, որի համաձայն «Անմահների գունդ» տերմինը պարսկական անվանում է, ապա հին պարսկերենում այն չէր կարող կազմված լինել մատեան բառարմատով: Աքեմենյանների և Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանում պարսկական բանակի «Անմահների գունդը» կրել է چاهای ابدان (չավիդանան) անունը⁸:

Այսպիսով, ուսումնասիրողների գերակշռող մասը «մատեան» բառը մեկնել է «ցուցակ» նշանակությամբ, ուստի և զորամասի «Մատեան գունդ» անունը ընկալվել է որպես բանակի հաշվառման սկզբունքի հետ առնչվող և նրանով պայմանավորված հատուկ անվանում:

Հետազոտողներից միայն Հ. Տաշյանն ու Գր. Ղափանցյանն են, որ «Մատեան գունդ» արտահայտությունը այլ կերպ են մեկնաբանել: Ըստ Տաշյանի «մատեան» բառը ծագում է Մեդիա անունից⁹: Իր առաջարկած բացատրությունը հիմնավորելու համար Տաշյանը Մեդիա տնվան հին պարսկերենում վկայված Mada բառաձևը նմանեցնում է «մատեան» բառին, իսկ «Մատեան գունդ» արտահայտությունը ընդունում որպես մեդական գունդ:

Հին պարսկերենում վկայված Mada երկրանվան ձայնեղ պայթյալներ (տվյալ դեպքում դ-ն) միջին կամ ժամանակակից պարսկերենում չէր կարող վերածվել շնչեղ խուլի (այսինքն՝ ք-ի): «Մատեան» բառի նման ստուգաբանությունը հակասում է լեզվի զարգացման ներքին օրինաչափությանը: Տեղի է ունեցել հակառակ երևույթ՝ խուլ պայթյալներ լեզվի զարգացման հետագա փուլերում իր տեղը զիջել է ձայնեղին:

Գր. Ղափանցյանը, ելնելով հայերեն երկաթագիր Տ և Բ գրերի նմանությունից, նպատակահամար է գտնում «Մատեան գունդ» տերմինը ընթերցել «Մարյան գունդ» ձևով: Այսպիսով այդ գնդի ծագումը դարձյալ կապվում է մեդացիների հետ¹⁰:

Իրանագետ Վ. Բ. Հեննինգը «Բունդահիշնի» ստուգաբանական տերմինների ուսումնասիրությանը նվիրված իր հոդվածում¹¹ հիշատակում է այդ աղբյուրում վկայված «մադյան-ուսղմ» (կամ ինչպես ինքն է առաջարկում ընթերցել՝ «մադյան-ի-ուսղմ») տերմինը և այն բացատրում է որպես «Անմահների գունդ»: Իրավացի է հեղինակը, երբ գտնում է, որ այս տերմինը պետք է տարբերել հայերեն «մատեան» (գիրք, ցուցակ) իմաստն արտահայտող բառից: Այնուհետև կարծելով, որ «Մատեան գունդը» հանդիսացել է մարտական կարգի կենտրոնը զբաղեցնող զորամաս, տերմինի բառացի թարգմանությունը տվել է «ընտիր», «հիմնական», «կենտրոնական», «զլխավոր», «հատուկ» բառերով: Այս բացատրությունը համոզիչ չէ թեկուզ այն պարզ պատճառով, որ նշված իմաստներն առտահայտելու համար պահանջվեցին երբեք չի օգտագործվել «մադյան» բառը:

Տերմինի նշված ընթերցումներից առաջինը կարելի է թարգմանել «մա-

⁸ چاهای ابدان «հավիտյան» բառից:

⁹ Հ. Տաշյան, Ուսումնական հայերեն լեզվի, Վիեննա, 1920, էջ 523, ծան. 2:

¹⁰ Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 35, ծան. 1: Մատյան բառը իրանական ծագում ունի և հայերենով կատարված ստուգաբանումը հավաստի չի կարող համարվել:

¹¹ W. B. Henning, An Astronomical chapter of the Bundahishn, JRAS, 1942 part. I, էջ 251:

տակամարտ», իսկ հրկրորդը՝ «մարտական (ռազմական) մատակ»: Երկու դեպքում էլ տերմինը վկայված է եզակի թվով, հետևաբար չի կարող արտահայտել գնդի կամ որևէ այլ ստորաբաժանման դադափար:

«Մատեան գունդ» տերմինի վերոհիշյալ բացատրությունները չեն պարզաբանում գնդի ընդհանուր կամ էական առանձնատկություններից և ոչ մեկը: Մեր համոզմամբ «Մատեան գունդ» տերմինի մատեան բառը արտահայտում է ռազմական գործին սերտորեն առնչվող որևէ հասկացություն:

«Մատեան» բառը ծագում է միջին պարսկերեն մաթ-ակ արմատից, որը նշանակում է մատակ, էգ ձի: Միջին պարսկերենում այն վկայված է մաթաթ ձևով: Ժամանակակից լեզվում գործածական է մադյան ձևը, որը համապատասխանում է միջին պարսկերենից փոխառնված և գրաբարում պահպանված մատեան ձևին: Հայերենում առաջացել է տարբեր ծագում ունեցող տերմինների համանմանություն, որոնցից մեկը՝ վերոհիշյալ մատեան «էգ ձի» նշանակությամբ, իսկ մյուսը՝ «գիրք, ցուցակ» իմաստով: Մատեան բառը «գիրք» նշանակությամբ առաջացել է միջին պարսկերեն մաթաֆդան բառից: Մաթաթ նշանակել է «հոգված», -դան վերջածանց է «սլարոնակող» նշանակությամբ: Այստեղից՝ «Մաթաթդան»՝ հոգվածների ժողովածու, դատաստանագիրք. օրինակ՝ սասանյան շրջանի Պարսկաստանում հայտնի դատաստանագիրքը, որ կոչվում էր «Մաթաթդան-ի-հազար դատաստան»: Ժամանակակից պարսկերենում մաթաֆ բառը «հոգված» իմաստով ստացել է **ماده** (մադե) ձևը և պահպանել է նախկին իմաստը, այնինչ հայերենում ձեռք է բերել միայն գիրք, ցուցակ նշանակությունը: Միջին պարսկերենի մաթաթ բառը «էգ ձի» իմաստով այժմ գործածվում է **ماداد** (մադյան) ձևով: Մադյան ձևը վկայված է նաև հայերենի մի քանի բարբառներում¹²:

«Մատեան գունդ» արտահայտության մեջ մատեան բառը որպես մատակ բացատրելը պայմանավորվում է նաև նրանով, որ այն անմիջականորեն կապված է ռազմական գործի հետ, և «Մատեան գունդ» արտահայտությունը ստանում է նոր՝ «մատակների գունդ» իմաստը:

«Մատեան գունդը» որպես մատակավոր հեծյալներից բաղկացած զորամաս ընկալելը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

Առաջին. ընդհանուր ռազմական պատմության մեջ բանակի զորատեսակների և նրանց ստորաբաժանումների հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրների և տարբեր ժամանակների կանոնավոր բանակներում զորամասերի անվանումը ելնում է նրանց կառուցվածքից: Այսպես, հեծելազոր, հետևակ, մարտակառքերի զորատեսակ և համապատասխանաբար՝ հեծյալ գունդ, հետևակային դումաֆտակ և այլն: Նույն սկզբունքով են կոչվում նաև ժամանակակից բանակների զորատեսակներն ու նրանց ստորաբաժանումները: «Մատակների գունդ» անվանումը համապատասխանում է զորատեսակների անվանման ընդհանուր սկզբունքին:

¹² Տե՛ս Կ. Ս. Գալսթյան, Լեոնային Չարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 425: Ռ. Հ. Բազրամյան, Շամախիի բարբառը, Երևան, 1964, էջ 213: Ս. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 32 և այլն:

Մաթաթ>մատյան>մադյան ձևերի հաջորդական փոփոխությունների մասին տես Paul Horn, Grundriss der Neupersischen Etymologie, Strassburg, 1893, 955, էջ 192:

Ներհուրդ. ռազմական նպատակներով ձին օգտագործվել է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Ռազմարշավի ժամանակ նա ծառայել է որպես զրաստ, իսկ մարտի ընթացքում՝ որպես հեծկան: Հեծկան ձին ռազմաձևակառույցում հանդես է եկել տարբեր մարտական խնդիրներ կատարող զորամասերում: Դեռևս հին ժամանակներում մարդիկ սկսել են ուշադրություն դարձնել կենդանու ցեղային առանձնահատկությունների վրա և յուրաքանչյուր կոնկրետ մարտական խնդիր իրականացնելու համար համապատասխան հատկություններ ունեցող ձիեր են օգտագործել: Այսպես՝ ծանրադեն հեծելազորի համար ընտրվել են ծանր և ուժեղ ձիեր: Կենդանու հատկությունների ուսումնասիրության ընթացքում դիտվել է նաև մատակի և հովատակի միջև եղած տարբերությունը: Հաստատվել է, որ մի շարք դեպքերում մատակը, հովատակի համեմատությամբ, ունի ակնհայտ առավելություններ: Այսպես, մատակն իր հասակով հովատակից ավելի ցածր է, բաշով՝ թեթև, մարմնով՝ ավելի երկար ու բարակ, ոտքերը՝ ավելի կարճ: Մատակ ձիերի կրծքավանդակը ավելի լայն է, քան հովատակինը¹³: Մատակի վերահիշյալ հատկությունները որոշիչ են դառնում շարժման արագության հարցը քննելիս: Ձիու շարժման արագությունը որոշվում է մարմնի և ոտքերի երկարության հարաբերությամբ¹⁴: Պարզված է, որ մատակը կարճ մրցատարածություններում աննշան չափով է ետ մնում հովատակից: Ինչքան երկարում է մրցատարածությունը, այնքան նվազում է ժամանակի տարբերությունը: Անգամ որոշ դեպքերում մատակը ժամանակով գերադանցում է հովատակին¹⁵: Այդ երևույթը բացատրվում է կենսաբանական այն հիմունքով, որ մատակի կրծքավանդակի լայնությունը և նրանով պայմանավորված՝ թոքերի ծավալի մեծությունը կենդանուն դարձնում է ավելի դիմացկուն¹⁶:

Հովատակները, մատակների համեմատությամբ, ունեն անհանգիստ և դյուրագրգիռ բնություն: Ռազմադաշտում գոյություն ունեցող պայմանները ընդունակ էին արթնացնելու կենդանու այդ հատկությունները, որոնք մարտի ընթացքում կարող էին բացասաբար անդրադառնալ հեծյալի վրա:

Ռազմական գործում մատակը նախընտրելու պատճառներից մեկն էլ, հավանաբար, այն է, որ մատակը կարող է միզել վաղժի ընթացքում¹⁷, այն դեպքում, երբ հովատակը այդ գործողությունը կատարելու համար ստիպված է կանգ առնել: Հովատակի հիշյալ հատկությունը մարտական զորաշարժերի, հարձակման, թշնամու տեսական հետապնդման և, վերջապես, փախուստի դեպքում հեծյալի համար կարող էր ունենալ ճակատագրական նշանակություն:

Ներհուրդ. ռազմական նպատակներով մատակի օգտագործումը անհրաժեշտ է դիտել պատմականորեն կոտակված փորձի արդյունք: Պարսկաստանի արեմենյան, սելեկյան և պարթևական ժամանակաշրջանների զրավոր աղբյուրները մեզ հետաքրքրող հարցի մասին տեղեկություններ չեն հաղորդում:

¹³ «Книга о лошади», М., 1952, I, т. 35; А. С. Красников. Экстерьер лошади, М., 1957, т. 187—190:

¹⁴ А. С. Красников, т. 2, гл. 1, т. 66—67:

¹⁵ «Труды всесоюзного научно-исследовательского института коневодства», М., 1952, вып. XIX, т. 158:

¹⁶ «Коневодство», М., 1948, т. 51:

¹⁷ Գր. Ղափանցյան, Ռաբրտի պատմություն, էջ 191, ծան. 1:

Ուստի անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություններ փնտրել հարևան երկրների սլավոնական անցյալում:

Մերձավոր Արևելքի երկրներից առաջինը, որտեղ ռազմական նպատակներով օգտագործվել է մատակր, Հայկական լեռնաշխարհն է:

Պատմական Հայաստանում դարգացած ձիաբուծության գոյության մասին արժեքավոր տվյալներ են պահպանվել հունական աղբյուրներում: Այդ աղբյուրներից հիշատակության արժանի են Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ պահպանված հետևյալ հատվածները.

«Այս երկիրը (Հայաստանը) այնքան «առատ է ձիերով» (չի դիջում Մեդիային), որ նույնիսկ նեսիական ձիերը, որ ծառայում էին պարսից արքաներին, աճեցվում էին նաև այստեղ: Հայաստանի սատրապը պարսից արքային Սիհրական կոչվող տոնակատարության համար տարեկան 20.000 հովատակ էր ուղարկում: Արտավազդը Անտոնիոսի հետ միասին Մեդիա ներխուժելիս, ի թիվս հեծելազորի տարբեր տեսակների, ցուցադրելու համար մարտական կարգով շարքի էր կանգնեցրել նաև 6000 դրահավորված ձիեր»¹⁸:

Ստրաբոնի երկրորդ վկայությունը վերաբերում է Մեդիայի ձիաբուծությանը. «Ինչպես այս երկիրը (Մեդիան), այնպես էլ Հայաստանը բացառապես «առատ են ձիերով»: Այստեղ մի մարգագետին կրում է «ձիաշատ» անունը...: Ինչպես պատմում են, պարսկական ժամանակներում այստեղ արածելիս են եղել 50.000 մատակներ (ընդգծումը մերն է — Ն. Ա.): Դրանք արքայական երամակներ էին: Ինչ վերաբերում է նեսիական ձիերին, որոնցից, որպես լավագույններից օգտվում էին արքաները, ոմանք պնդում են, որ նրանց ցեղը ծագում է այստեղից, իսկ ուրիշները՝ Հայաստանից»¹⁹:

Ստրաբոնի «Աշխարհագրությունից» բերված հատվածներում ուշագրավ են երեք փաստ:

ա. Հայաստանը և Մեդիան ունեցել են ձիաբուծության համար անհրաժեշտ հարուստ արոտավայրեր:

բ. Այդ արոտավայրերում պահվել և աճեցվել են ձիերի այնպիսի ցեղեր, որոնց առանձնահատկությունները պետք է որ հավասարապես ծանոթ լինեին Հայաստանի և Մեդիայի ձիաբուծներին:

գ. Մատակների երամակները արքունական էին համարվում ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ նրանք նախատեսված էին նաև ռազմական գործում ծառայելու համար:

Այսպիսով, եթե Հայաստանի և Պարսկաստանի ձիաբուծներին հայտնի են եղել ձիերի որոշ տեսակներ իրենց ցեղային յուրահատկություններով հանդերձ, ապա կարելի է ենթադրել, որ երկու երկրներում պետք է որ ծանոթ լինեին նաև մատակի և հովատակի առանձնահատկություններին և դարերի ընթացքում, մատակի հատկություններին համապատասխան, գործնականորեն օգտվեին դրանցից: Հայկական լեռնաշխարհում ռազմական նպատակով մատակի օգտագործման մասին մեղ ծանոթ առաջին և հնագույն վկայությունը վերաբերում է մ. թ. ա. VIII դ.: Այս տեղեկությունը պահպանվել է Թիզլափ-պալասար Գ-ի Կալխու պալատի քարե սալերի վրա գրված երկրորդ արձանագրության տեքստում: Արձանագրությունը նկարագրում է Թիզլափպա-

¹⁸ Страбон, География, М., 1964, XI, 14, 9.

¹⁹ Նույն տեղում, XI, 13, 7:

լասար Բ-ի և ուրարտական թագավոր Սարգուրի Բ-ի միջև (735 թ. մ. թ. ա.) տեղի ունեցած ճակատամարտի ընթացքը²⁰։ Բերում ենք արձանագրության համապատասխան հատվածը. «Սարգուրի ուրարտացին իմ հանդեպ խորխտացավ և Բիթ-Ադուսիի Մաթիիլի հետ դաշինք կնքեց։ Կումմուխ երկրի Քիշթան և Խալպու քաղաքների միջև ես նրան պարտության մատնեցի. նրա ողջ բանակատեղին ես գրավեցի. իմ զենքի ահից նա վախեցավ և իր կյանքի փրկության համար մատակի վրա դիշերով դեպի անմատչելի Սիբակ լեռը փախավ»²¹։

Մատակի մասին երկրորդ վկայությունը հիշատակված է Սարգոն Բ-ի «Լուվրի աղյուսակում»։ Խոսքը վերաբերում է Սարգոն Բ-ի և Ռուսա Ա-ի միջև Ման/ն'ալում տեղի ունեցած ճակատամարտին։ Ճակատամարտը ավարտվեց Ռուսա Ա-ի պարտությամբ և, ինչպես նշված է վերոհիշյալ աղյուսակում, «իր կյանքի փրկության համար նա (Ռուսան) լքեց իր մարտակառքը և մատակի վրա հեծած, իր զորքի զուխն անցնելով, դիմեց փախուստի»²²։

Բերված տվյալները վկայում են հեռավոր անցյալում հովատակի նկատմամբ մատակի ունեցած առավելության գիտակցումը և այն գործնականում կիրառելու փորձը։

Աղբյուրներում պահպանված և մեզ ավանդված հաջորդ տեղեկությունը վկայված է մ. թ. III դ.։ Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր Ա-ի պալատական բարձրաստիճան պաշտոնյաների ցուցակը ղեկավարված է նրա որդի Շապուհ Ա-ի «Քա՛աբեյե Վարդոշ»-ը (ՏԿԶ) ժալալուն արձանագրությունում։ Ցուցակում, ի թիվս ռադմական այլ պաշտոնների, հիշատակված է նաև «Մաթբանփաթ»-ը²³, որ թարգմանվում է «Մատակների պետ»։

Արձանագրության տվյալ վկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ արդեն III դ. սկզբին Պարսկաստանում մատակը ռադմական նպատակներով առանձին ղեկավարում օգտագործելուց բացի, կազմված է եղել նաև մատակներից բաղկացած հատուկ հեծյալ զորամաս, որը հավանաբար կազմավորված պետք է լիներ Սասանյանների տիրապետությանը նախորդող ժամանակաշրջանում։ Այդ հավանականությունը ամրապնդվում է նաև այն փաստով, որ պարթևական բանակը բաղկացած էր գերադանցապես հեծելազորից։ Պարթևական տիրապետության ժամանակաշրջանի Պարսկաստանում, ինչպես վկա-

²⁰ Ուրարտական շրջանի փաստերի վկայակոչման համար շնորհակալություն ենք հայտնում Հ. Հ. Կարադոզյանին։

²¹ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, № 43 (ВДН, 1951, № 2).

²² Նույն տեղում, № 49, տող 125։

²³ M. Sprengling, Third Century Iran, Sapor and Kartir, Chicago, 1953, էջ 12 (Parth. տող 24, M'dknpt, Pahl. տող 30, M'dknpt.).

²⁴ Իրանագետ Ռ. Ֆրայը վերջին աշխատություններից մեկում («Наследие Ирана», М., 1973, էջ 289, ծանոթ. 15) որպես չհիմնավորված կարծիք հրաժարվել է «Մաթբանփաթ» տերմինի «Անմահների զնդի պետ», «Թիկնապահների պետ» իր նախկին բացատրությունից։ Շապուհի արձանագրությանը նվիրված ծավալուն ուսումնասիրության մեջ Ա. Մարիքը «Մաթբանփաթ» տերմինը մեկնել է որպես պալատի «սպասավորների պետ» կամ «զխավոր տնտես»։ Sté. E. Honigmann, A. Mariq, Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, էջ 324-325, ծան. 10։ Վերջին հետազոտություններում «Մաթբանփաթ» տերմինը բացատրվում է որպես «Անմահների զնդի պետ»։ Sté. B. Г. Луконин, Культура сасанидского Ирана, М., 1969, էջ 43։

յում է Յուստինը, ձին ըստ ամենայնի օգտագործվում էր ոչ միայն ռազմական նպատակներով, այլև կենցաղում²⁵։

Սասանյան Պարսկաստանի բանակի «Մատեան գնդի» մասին հայ աղբյուրների հաղորդած տեղեկությունների քննումը, ինչպես տեսանք սկզբում, հետադոտողներին թույլ էր տվել հայտնել այն միտքը, թե «Մատեան գունդ» անունը կրող զորամասը գոյություն է ունեցել միայն պարսկական բանակում, և այն դիտվել էր որպես լուր պարսկական հերևելիք։

Փալստոսի հաղորդման մեջ «Մատենիկ գնդի» մասին վկայված փաստը մեր համոզմամբ ցույց է տալիս այդ զորամասի օրինաչափ առկայությունը նաև հայկական բանակի կազմում։

Ռազմական պատմության համար նշանակալից հետաքրքրություն ներկայացնող հերևելի առաջացման և զարգացման ընթացքը, ինչպես նաև անցման փուլերում նրա կրած ձևափոխման այլ մանրամասնություններ, եղած սակավաթիվ փաստերով հնարավոր չէ ուսումնասիրել։

Մատակի մասին աղբյուրներում պահպանված փաստերը թույլ են տալիս դիտարկել, որ՝

ա. Ուրարտական ժամանակաշրջանի տեղեկությունները վկայում են մատակը ռազմական գործի մեջ դնելու մեղ հասած թերևս առաջին փորձերից մեկի մասին։

բ. ՏՃՀ-ի, Փալստոսի և Եղիշեի վկայություններում նկատելի է պատմականորեն կուտակված հարուստ փորձի առկայությունը։ Այստեղ արդեն բաղմակողմանիորեն ստուգված փորձը հանգեցրել է բանակի կազմում նոր զորամասի առաջացմանը։

«Մատեան գնդի» մասին տվյալները, անշուշտ, չեն սահմանափակվում վերոհիշյալ փաստերով։ Աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը կարող է նորանոր փաստերի հայտ բերել։ Առայժմ հարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությունների։

ա. «Մատեան» բառը ծագում է միջին պարսկերեն «մաթաբ» բառից և նշանակում է «էգ ձի, մատակ»։ «Մատեան գունդ» տերմինը բացատրվում է որպես մատակներից կազմված հատուկ հեծյալ զորամաս։

բ. Ռազմական նպատակներով մատակը նախապես օգտագործվել է առանձին դեպքերում։ Դարերի ընթացքում կուտակված փորձը հանգեցրել է բանակում մատակներից հատուկ զորամաս կազմելուն։

գ. «Մատեան գունդը» հիշատակված է ոչ միայն որպես սասանյան ժամանակաշրջանի պարսկական բանակի միավորում, ինչպես այն դիտվել է մինչև այժմ։ Այն գոյություն է ունեցել նաև հայկական բանակի կազմում։

²⁵ «Պարթևները ամբողջ կյանքը անց են կացնում ձիու վրա։ Ձիու վրա նրանք մարտնչում են և զվարճանում, կատարում են անձնական գործեր և հասարակական պարտավորություններ։ Ձիու վրա նստած նրանք տեղափոխվում են և կանգ առնում, զրուցում են և առևտուր անում» (Юс т и н, Эпитома сочинения Помпея Трога, 61, 3, 4, ВДП. 1951, № 1, էջ 220)։

**ВОИНСКАЯ ЧАСТЬ «МАТЯН ГУНД», УПОМИНАЕМАЯ
В АРМЯНСКИХ ПЕРВОИСТОЧНИКАХ**

Н. А. АРЗУМАНЯН

(Резюме)

Подразделение в армии сасанидского Ирана, известное по армянским источникам под названием «Матян гунд», до сего времени исследователями интерпретировалось как «полк бессмертных». Аргументацией для подобного определения служило среднеперсидское слово «матак-дан» (сборник законодательных статей), что в армянском языке засвидетельствовано в форме «матян» — «книга», «список».

Слово «матян» нами этимологизируется с помощью слова «матак» (кобыла), что позволяет по-новому осмыслить термин «Матян гунд». Под этим термином подразумевалась конница, в которой использовались только кобылы.

В письменных источниках имеются соответствующие сведения об использовании матян-мадян, или кобылы в коннице, начиная от единичных случаев (урартский период) до появления организованного вооруженного отряда. Термин «Мадканпат», засвидетельствованный в известной надписи Шапура I «Каабе Зороастра», в статье также этимологизируется как «глава кобыл». Сведения, сохранившиеся о «Матян гунд», позволяют установить наличие такого подразделения также в армии аршакидской Армении.